

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ

30.08.2017



Սիրելի՛ աշակերտներ, հարգելի՛ մանկավարժներ և ծնողներ:

Սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Սեպտեմբերի 1-ը մեզանում միշտ էլ եղել է տոնական ու նաև սպասված, քանզի յուրաքանչյուր մեկնարկող ուսումնական տարեշրջան դպրոցականների համար մի նոր հնարավորություն է՝ մեր ոսկեդենիկ այբուբենը յուրացնելու, խորը ու կայուն գիտելիքներ ձեռք բերելու, կարողությունների սահմաններն ընդլայնելու և իմացությունը բազմապատկելու համար:

Հայ ազգն իր ողջ պատմության ընթացքում միշտ էլ առանձնահատուկ հոգածություն է դրսևորել դպրոցի և սեր ու հարգանք տաժել ուսուցչի հանդեպ: Իսկ դպրության, գիր-գրականության և որակյալ կրթության հանդեպ սերը մեր ժողովրդի մեջ փոխանցվում է սերնդեսերունդ:

Ուզում եմ ամենայն սիրով ու ջերմորեն շնորհավորել առաջին դասարանցիներին: Թող, նրանց ոտնամուտը գիտելիքի տաճար լինի բարեբեր: Թող նրանց դպրոցական կյանքը լեցուն լինի անհոգ ու լուսավոր ապրումներով, բազում հետաքրքիր ու գեղեցիկ ակնթարթներով:

Հարգարժան մանկավարժներ, բարձր գնահատելով ձեր ներդրումը մարզի կրթական համակարգի զարգացման գործում՝ հաստատ գիտեմ, որ որպես կրթության ու դաստիարակության գործի նվիրյալներ, ձեր սաների հոգում սերմանելու եք վեհ ու համամարդկային գաղափարներ, գործադրելով ամեն ջանք ու եռանդ: Համոզված եղեք, որ ի պատասխան ձեր նվիրական աշխատանքի, մարզային իշխանություններն ամեն միջոց ձեռնարկելու են, որպեսզի ապահովեն ձեր դժվարին, բայց պատվաբեր գործունեության անխափան ռիթմը:

Հարգելի՛ ծնողներ, այս օրը նշանակալի է նաև ձեզ համար: Մաղթում եմ, որպեսզի իրականանան երեխաների հետ կապված ձեր բոլոր իղձերն ու երազանքները:

Սիրելիներս, մեկ անգամ ևս շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության տոնի կապակցությամբ: Մաղթում եմ նոր ձեռքբերումներով լեցուն բեղմնավոր ու արդյունավետ ուսումնական տարի:

Բարի երթ նոր ուսումնական տարում:

Աստծու օրհնությունը բոլորիդ: